

տիտանի ստիպեցին bis-երի վրա երգելու Վրան-
դելի «Ты мое утро», Բուրնիստեյնի «Наст-
рое» րոմանտները եւ վերջին էլ «Шивовая Да-
ма» օպերայից «Что наша жизнь... Сегодня
вы, а завтра я»...

Օր. Պապայանի սկսեց Չայկովսկուց եւ
bis-երի վրա երգեց «Հազար ծրանի»-ն եւ
Չայկովսկու «Мы сидели с тобой» եւ Բու-
րնիստեյնի «Ночь»-ը: Հասարակութիւնը հիա-
ցած ցոյցեր արեց նրան: Պապայանից յետոյ
կարդաց իր մեղօղկութեան դերասանուհի
Պատրիկայան: Պատրիկայան շատ համակրելի
դերասանուհիներէն է եւ իր տեսակի մէջ
միայնակն է:

Գոյնան հրաշալի էր, նա մի անգամ եւս
ապացուցեց, որ տրամաբան էր այն տիտղոսնե-
րին, որ մինչեւ օրս չտալու են նրա հաս-
ցէին: Զուգահեռաբար պ. Նալբանդեանը դե-
ղեցիկ կերպով նուագեց Սարասատէի «Playera»,
Բրամսի «Dansen hongroises» եւ Բիտերի վրա
«Oriental»: Պ. Նալբանդեանը օր ըստ օրէ ա-
ռաջ է գնում, այժմ նա դաստառու է Պետեր-
բուրգի կոնսերվատորիայում եւ իր մասնագի-
տութեան դասարանն ունի: Շահլամեանը եր-
գեց Գալֆայանցի «Օրօրոցի երգը», Բիտերի
վրա Բախտինովի «О, НЕТЬ, МОЮ ТЕБЯ» եւ
Կոչետովի «НЕТЬ ТЕБЯ» րոմանտները: Հասա-
րակութիւնը անվերջ ծափահարում էր: Բ.
բաժանմունքի երգեցողական բաժինը փակեց
սիրողների խումբը երգելով Պ. Միրզանցի
քառամասնած «Հարբաբը», Կոչալէնկոյի միա-
մասն «Հէն»-ը, որի վերջին 4 տակտն էր մի-
այն քառամասնած եւ Բիտերի վրա «Հէյթնե-
ցոց մարչը», էլի միամասն: Ապա օկուպցիոն պա-
րերը էտորադի վրա՝ «Կինտոնի», «Էլեգիան-
կա», «Ուղտուղարա», եւ «Շալախո», որոնք
չը գիտեմ ինչպէս անուանված էին ազգային:
Ապա օկուպցիոն եւրօպական պարերը, որոնց
յաջորդեցին կրկին ասիական պարերը: Հայ-
կական երկուքը մեծ աշողութիւն ունեցաւ
եւ հասարակութիւնը գիշերվայ 4 ժամին մի-
այն գոհ սրտով տուն գրվեց:

Ի.

ՆԱՄԱԿ ԱՆՈՒՄԱՆԱԿԻՑ

Նոյեմբերի 18-ին

Այսօր մեծ բազմութեան ներկայութեամբ
այտագրի եկեղեցում հանդիսաւոր պատարագ
եւ հոգեհանգիստ կատարվեց Կ. Ղեւոնդ Ալի-
շանի յիշատակին: Շուրջառով ծածկված դա-
գադի վրա դրված էին քահանայական սաղա-
ւարտ, աւետարան եւ հանդուցեալի մեծագիւր
ձեռնակար գեղեցիկ պատկերը, որ տիկինները
զարդարել էին թարմ ծաղիկներից հիւսած
պսակով:

Պատարագից յետոյ, հոգեհանգիստից առաջ,
Դիլիսկայի գիւղական ուսուցիչ պ. Յ. Բառեա-
նը, մի հայ-կաթօլիկ երիտասարդ, ժամաշա-
պիկ հագած, ճառ կարդաց, որով գեղեցիկ
կերպով պատկերասրբեց հանգուցեալի կեանքն
ու գործունէութիւնը. ապա պ. Վ. Շահապա-
րեանի գրած ճառը, որով նա հայ գրական
նշաններ կրած կորուստն էր ողբում, զգաց-
ված կերպով կարդաց քաղաքային դպրոցի ու-
սուցիչ պ. Թ. Պետրոսեանը: Սրկու ճառերն էլ
մատչելի էին ժողովրդին, կարդացվեցին գե-
ղեցիկ ռոտանտիստիկեան եւ գեղեցիկ տպաւո-
րութիւն ու ներդաշնակ ազդեցութիւն արին
ուսնիդրները օրիք եւ մտքի վրա: Հոգեհան-
գիստի ժամանակ աւագ քահանաներից մէկը
կարդաց հոգեհարկանների թաղմանը կամ
հոգեհանգիստին յատկացած աղօթքը:

Պատարագի եւ հոգեհանգիստի ժամանակ եր-
գում էր երկու սեռի քառամասն խումբը: Առ-
հասարակ հոգեհանգիստը մեծ չուքով կատար-
վեց: զգացված ժողովրդից շատերը երկար դի-
տում էին հանգուցեալի շատ աշողված պատ-
կերը, որ այժմեանդրօպօյցի մի էջիտասարդ
նկարչի գործ է, ապա համարում ու հետա-
նում էին Հարկաւոր եւ համարում աւելաց-
նել, որ հոգեհանգիստի ծախսերին մասնակցե-
ցին բազմաթիւ արհեստաւորներ իրանց ցակու-
թեամբ:

Ի դէպ. Գարեգին վարդապետի՝ հոգեհան-
գիստ կատարելու թոյլտուութիւն չը տալը
մեծ զարմանք պատճառեց այստեղ «Մշակի»
255-րդ համարը քաղաքում բաժանվեց պա-
տարագի ժամանակ. շատերը վախճում են,
թէ մի գուցէ քահանաները իմանան եւ յան-
կարծ հոգեհանգիստի մոմերը հանգցնեն: Թէեւ
այդպիսի բան չը պատահեց, բայց քահանանե-
րից դամբանական խօսքը չեղաւ. միայն ինքն
աւագ քահանան էր մի երկու զգացված խօս-
քով հոգեհանգիստի մասին ծանուցում ա-

րել նախորդ օրը. իսկ միւս, խօսելու աւելի
չնորհե ունեցող աւագ քահանան, որին ա-
ռաջարկել էին ճառ խօսելու հոգեհանգիստի
ժամանակ, հրաժարվել էր՝ «բուռն ցաւելու»
պատճառով: Զարմանալի բան. երբ հայ-կաթօ-
լիկ պատանիները քառամասն խմբի մէջ եր-
գում են հայ եկեղեցում եւ մի եւ նոյն հայ-
լեզուով փառաբանում են մի եւ նոյն Աս-
տուծուն, եւ նրանց ծնողները արգելք չեն լի-
նում այդ բանին, իր լուսաւորչական եւ հայ-
կաթօլիկ երիտասարդները իրանց ոգեւորված
ճառերով, թեւթեւի առած, ձգտում են մէկը
միւսին գերազանցել՝ «Աւարայրի բլրույի»,
«Հայոց խօսնակի», «Հայ աւերակների վրա
աւաւանող Արծիւն-Արիշանի», մեծ եւ անմահ
հայ բարեմասնութիւնները եւ մեծ գործերը
գրուածներով մէջ, — Գրիգորի եկեղեցու ապա-
ստուր հայ կղերը, չը գիտեմ ինչ բարձրա-
գոյն, մեզ, հասարակ մասկանայուններին, հա-
մար անմատչելի շահերի համար ձգտում է
ոչնչացնել մեր եղբայրսրական վսեմ եւ բարձր
քրիստոնէական զգացմունքները: Իզուր չէր
մեր այտաղի քահանաներից մէկը այս տար-
վայ իր քարոզչերից մէկում, մասնանիչ անե-
լով այն օր օրի վրա լայնացող եւ խորացող
վիճի, որ ընկած է հայ կղերի եւ ժողովրդի
մէջ, ինքն իրան մտրակում բացականչելով՝
«Ո՛վ դու կղեր, — ազգի աւեր»...

Սպիլումեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԻՐ

Ներկ, նոյեմբերի 22-ին, Նորին Կայսերական
Բարձրութիւն Թագաժառանգ եւ Մեծ-Իշխան
Միխայիլ Ալեքսանդրովիչի ծննդեան եւ անուա-
նակոյութեան տօնի օրը, Վրաստանի Էկզարխի
եկեղեցում կատարվեց գոհացողական մաղ-
թանք, որին ներկայ էին կովկասեան իշխանու-
թեան բարձրաստիճան ներկայացուցիչները:
Գոհացողական մաղթանքներ կատարվեցին
նոյնպէս հայադաւաններին, կաթօլիկներին եւ
բողոքականներին եկեղեցիներում, ինչպէս նաեւ
մահմադականներին մզկիթում ու հրէաների ա-
ղօթատանը: Առաւօտվանից քաղաքը զարդար-
ված էր դրօշակներով, իսկ երեկոյեան լուսա-
վառված:

Զորքալքերի, նոյեմբերի 21-ին, փակվեց
կովկասեան ցուցահանդէսը՝ ութսուն օր ցոյց-
ութիւն ունենալուց յետոյ: Յուշահանդէսի գրօ-
շակը վայր իջեցվեց եւ յալորդ օրվանից,
նոյեմբերի 22-ից, սկսվեցին դուրս տանվել
հանդէս դրված առարկաները: Ամեն բաժնի
կառավարիչը ինքը անձամբ կամ իրագորի մի-
ջոցով հսկում է իրերի վրա եւ աւանդին տոմ-
ար է տալիս նրանց դուրս բերելու համար:
Ծաղահանդէսի առարկաների մի նշանաւոր
մասը արդէն դատարկված է: Իրերը վերցնելու
համար նշանակված է մի ամիս ժամանակա-
միջոց: Այն իրերը, որոնք այդ ժամանակամի-
ջոցում չեն վերցնվի, կը դառնան կովկասեան
գրեղաբնակեանքային ընկերութեան սեփականու-
թիւն: Իրերը դուրս տանելու գործը կանոնա-
ւորելու նպատակով երէկ ցուցահանդէսի բա-
ժինների բոլոր կառավարիչները ժողովվել էին
ցուցահանդէսում եւ կառավարեցին իրերի
դուրս տանելուն վերաբերող բոլոր գործը:

Վրաստանի նոր նշանակված էկզարխ Ալեք-
սէյ արքեպիսկոպոսը ծնվել է 1839 թւին
Պսկովի նահանգում: Նա աստուածաբանութեան
կանդիդատի աստիճան ունի. ծառայութեան
մեծ մասը անց է կացրել Վրնայի, Գրոշնայի եւ
արեւմտեան այլ նահանգներում: Վերջին ժա-
մանակ նա Վեռնայի թեմի առաջնորդ էր:
Վրաստանի նախկին էկզարխ Ֆիլիքսան, որ
Բարձրագոյն հրամանով տեղափոխված է Խար-
կով. կուղեւորվի Թիֆլիսից դէպի իր նոր պա-
տօնատեղին տաւրիկայ գեղեցիկ քաղաքում ա-
ռաջին թւերին:

Գուղաւորից Վլադիկավկազի ճանապարհի
գրութեան մասին ստացված է հետեւեալ պաշ-
տօնական հեռագիրը, ուղարկված նոյեմբերի
20-ին. Ալեքսանդր պարզեց. փոթորիկը Կով-
կասեան լեռնաշղթայի վրա դադարեց. ցուրտը
հասնում է Յ աստիճանի: Պատաստուրում եկած
խոր ձիւնը հալվում է: Արագվան վարարել է:
ճանապարհը Թիֆլիսից մինչեւ Մէթ կայա-
րանը անցնում են կառելով, իսկ Մէթից
մինչեւ Գուղաւոր — սահմաններով: Գուղաւորում
եւ Կօրիում ձիւնի խորութիւնը երկու արշինից
աւելի է. տեղի են ունեցել ձիւնի շատ փլուածք-
ներ: Ընթացքով մեծ անակի ճանապարհը բա-
նալ մինչեւ նոյեմբերի 22-ի երեկոյեան Կօրի

կայարանից մինչեւ Վլադիկավկազ ճանապարհը
բաց է:

Թիֆլիսի նահանգապետի կարգադրութեամբ,
Թիֆլիսի մէջնակների վարչութեան աւագը հե-
ռացրված է իր պաշտօնից՝ քրէական դատի
ենթարկվելու պատճառով, եւ նրա տեղ ժա-
մանակաւորապէս նշանակված է, մինչեւ մէջ-
նակների վարչութեան անդամների նոր ընտ-
րութիւնները, Թիֆլիսի օրերի դատարանի
անդամ եւ մէջնակների պատգամաւոր Ֆադէյ
Ասիսով: Վերջինս, արդէն պաշտօնը ստանձ-
նելով, հրաւիրել է իր նախկին պաշտօնին մէջ-
նակների վարչութեան քարտուղար պ. Զի-
լեանովին:

Թիֆլիսի շերտապահական կայարանի քըն-
նութեանը այս տարվայ ընթացքում ներկայաց-
ված է 57,000 մոխայ շերտա մերմ: Սերմի այս
քանակութիւնը ներկայացված է թէ տեղական
եւ թէ արտասահմանեան շերտապահների կող-
մից:

Մայրաքաղաքի լրագրիչների աւելով, հիմն-
վում է մի նոր ընկերութիւն, որի նպատակն
է աղակցութիւն ցոյց տալ Ռուսաստանի մե-
ղուսպահներին եւ շերտապահներին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑԻՑ մեզ գրում են. «Ինչպէս
«Մշակի» ընթերցողներին յայտնի է, եկեղեցա-
կան խորհուրդը այստեղի հայ ուսանողների
վրա տարեկան 12,000 ռուբլի է ծախսում:
Վերջին ժամանակները Մօսկվայի հայ ուսանող-
ներից 14 հոգի խորհուրդի անունով խնդրե-
ցան ներ ներկայացրել եւ խնդրում էին, որ
Մօսկվայում սովորող հայ ուսանողներին էլ
անուշադիր չը թողնեն եւ թոշակներ նշանակեն
այնպէս, ինչպէս Պետերբուրգի ուսանողներին
է նշանակվում: Այդ հարցը երկար ու բարակ
վիճարկութեան նիւթ դարձաւ խորհրդի ան-
դամների մէջ: Վերջապէս ձայների մեծամաս-
նութեամբ վճռվեց 1902 թ. յունվարից տարե-
կան 6000 ռ. տալ Պետերբուրգի բարձրագոյն
դպրոցներում սովորող հայ ուսանողներին,
մօտ 3000 ռ. Մօսկվայի չքաւոր ուսանողներին,
իսկ 3000 ռ. միացած ուսանողներին:

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՈՎԻՑ մեզ գրում. «Այսօր,
նոյեմբերի 18-ին, տեղիս հայ-կաթօլիկների
եկեղեցում կայացաւ հանդիսաւոր պատարագ
եւ հոգեհանգիստ, ի յիշատակ հանգուցեալ Կ.
Ղեւոնդ Ալիշանի: Պատարագիչ Կ. Պոլոս վար-
դապետ Նահապետեան յայտնեց դառն կորուս-
տը, որ կրեց ազգը ի դէմս հայր Ղեւոնդ Ալի-
շանի: Եկեղեցական դասը կատարեց հոգեհան-
գիստ, որի միջոցին պ. Պոլոս Բէլուրեան
կարդաց դամբանական ճառ: Եկեղեցին լի էր
աղօթողներով:

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՅԻՑ մեզ գրում են. «Հայր
Ղ. Ալիշանի մահվան առթիւով այսօր այստեղի
հայոց եկեղեցում հանդիսաւոր կերպով հոգե-
հանգիստ կատարվեց: Պ. Տ. Տէր-Խաչատրեանը
մի գեղեցիկ դամբանական խօսեց:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Նոյեմբերի 15-ին,
նախահանգութեամբ պ. Գ. Զառափեանից եւ
Գ. Բալայեանից, Ն. Խաչատրեանից թաւա-
րօնական դատիչձում օրիորդների խումբը ներկա-
յարեց, յօգուտ Շուշու քաղաքային օրիորդաց
դպրոցի, Մօլիերի «Ակամայ բփշիկ» երեք գոր-
ծողութեամբ կովկասեան եւ Չիսովի «Առաջար-
կութիւն» 1 գործողութեամբ վօղբվելու, ուսաց
լեզուով: Ներկայացան մասնակցում էին՝ օր.
Ա. Կապիլօւ, Վ. Լազարեանց, Ն. Մանուշա-
րեանց, Փ. Բաղդասարեանց, պ. պ. Ն. Տելեւ-
կով, Գ. Բալայեանց, Գ. Զառափեանց, Ս. Շա-
մախեանց, Ա. Արախեանց եւ այլն: Ընդհանուր
կատարվարիչ էր օրիորդաց դպրոցի տեղւոհի
տիկին Կ. Սպանդարեանց: Թատրոնը ծայրէ ի
ծայր լինէր երկու սեռի հասարակութեամբ:
Անտրակտներին նուագում էր եւրօպական եւ
առիական երաժշտութիւնը: Խաղն ընդհանրա-
պէս լաւ անցաւ: Պէտք է խորին շնորհակա-
լութիւն յայտնել մեր հասարակութեան, որ
անկեղծութեամբ աջակցեց այս գործին
եւ մի քանի տիկիններին, որոնք յան-
ձմեղիները վաճառում: Ներկայացան մուտ-
քի կողմից շատ լաւ էր: Ներկայացան վերջը
նշանակված էր պարահանդէս, որ տեւեց մին-
չեւ առաւօտեան ժամի երեքը: Ժողովուրդը
հեռացաւ գոհ սրտով:

ՆՈՐ-ՆԱԽԻՉԵԻԱՆԻՑ մեզ գրում են. «Նոր-

Նախիջևանի բարեգործական ընկերութիւնը
հետաքրքիր ուղարկեց Վենետիկ՝ Կ. Ղազարու-
կիչին՝ յայտնելով Միխիթրեան միաբանութեա-
նը ընկերութեան ցաւակցութիւնը Ալիշանի
մահվան առթիւով:

ԱՆՈՒՄԱՆԱԿԻՑ մեզ գրում են. «Քաղա-
քում եւ մի քանի գիւղերում որովայնային
տիֆ է տարածված եւ դժբաղդաբար զոհեր է
տանում: Ուրիշ հիւանդութիւններ էլ կան, որ
բացառվում է այս աշնան փոփոխական եւ
խառն եղանակներով:

ԱՍՏԱՐԱԴԻՑ մեզ գրում են. «Մեզանում
ծաղիկ հիւանդութիւնը երեխաների մէջ հա-
մաճարակ ընտանորութիւն է ստացել: Բարե-
բաղդաբար, մինչեւ այժմ զոհեր քիչ են եղել:

ՆՐԻՆԱՆԻՑ մեզ գրում են. «Կիրակի, տօմար
18-ին, պատարագից յետոյ թեմական դպրոցի
դահլիճում ուսուցչական խումբը աշակերտ-
ներին ներկայութեամբ կատարեց Կ. Ալիշանի
հոգեհանգիստը: Պոսեց տեսչի պաշտօնակա-
տարը, որի ճառից իմացանք, որ չուտով եւ մի
գրական երեկոյ կը նուիրեն դպրոցում մեր
հայրենիքի անմահ խօնակի յիշատակին: Հե-
տաքրքրական է այն, որ հոգեհանգիստին ներկայ
չէր նոր կաղանկեղված հոգաբարձութեան եւ
ոչ մի անդամ: Իսկ մեր առաջնորդը, ինչպէս
ասում են, չը բաւականանալով հոգեհանգիստը
վատ վարագործված պատրուակներով եկեղե-
ցուց դպրոցի դահլիճը տեղափոխելով, չը բա-
րեհաճեց գոնէ դպրոցում ներկայ լինել հոգե-
հանգիստին եւ պատարագից անմիջապէս յետոյ
չտապեց առաջնորդարան:

ՍՆԻԱՆԻՑ մեզ գրում են. «Նոյեմբերի
20-ին Սեւանի միաբանութեան կողմից հետե-
ւեալ հետաքրքիր ուղարկվեց Վենետիկ, Միխի-
թրեան միաբանութեան. «Պորին վիշտ պատ-
ճառեց բոլորիս հայր Ղեւոնդ Ալիշանի մահը,
կորուստը անգաւառելի է, հանգիստ գրականու-
թեան մեծ վատակաւորին: Սարգիս եպիսկո-
պոս»:

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Երէկ ամօրի
18-ին, տեղիս հայ լուսաւորչական եւ կաթօլիկ
եկեղեցիներում հոգեհանգիստ կատարվեց ամե-
նիս օրերի՝ հայր Ղեւոնդ Ալիշանի համար:
Պատարագից յետոյ Միխան քահանան քարոզ
խօսեց՝ բացատրելով թէ ով էր Ալիշան եւ ինչ
մեծ ծառայութիւններ է արել մեր ազգին:
Իսկ կաթօլիկների եկեղեցում գեղեցիկ կերպով
զարդարված դիպադրի վրա դրված էր տեղիս
երկու դաւանութիւններին պատկանող՝ հայ
հասարակութեան կողմից արծաթեայ պսակ
մեծ Ն ա ա պ ե տ ի պատկերով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Վերջում
երկրաշարժից առաջացած աղէտը այստեղ էլ
արձագանք գտաւ: Եկեղեցական խորհուրդը 100
անգլիական ստերլինգ (950 ռուբլի) յատկացրեց
երկրաշարժից վնասված էրգուրմի հայ ժողո-
վրդի օգտին:

ԱՌՈՒՄԱՆԱԿԻՑ մեզ գրում են. «Տեղական
թերթերից մէկին կրանտօգրակից հաղորդում
են, որ այստեղ անցեալ օրերը թունաւոր
ձուկից մի քանի ժամվայ ընթացքում թու-
նաւորվել են հինգ հոգի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԻՏԱԼԻԱՅԻՑ

Վենետիկ, նոյեմբերի 28-ին

Մեռաւ Կ. Ալիշան. հանգաւ վերջին ճառա-
պայթը, որ լուսաւորում էր մեր աղքատիկ
կեանքը: Նա, կէտ դարուց աւելի երգելով մեր
անցեալ փառքը, ողբալով մեր ներկայ թշուառ
կացութիւնը, մեռաւ թողնելով իր վերջին հա-
ռաչանքը, թափելով վերջին կաթիլ արտասու-
քը չորացած աչքերից իր խանդավառ օրով
սիրած ազգի եւ հայրենիքի բեկորների վրա:
Թէ ինչ էր Ալիշանը մեզ համար, այդ մենք
աւելի կարող ենք գգալ, քան թէ բացատրել:
այսպիսի զգաւոր վարկեանում, երբ մենք
գրկվեցինք այդ սիրելի, մեծ հայից, որի ա-
նուանը կապված էր մեր կեանքի, կրթութեան
հետ, դատողութեամբ չէ, որ մենք կարող ենք
բացատրել կորուստի մեծութիւնը:

Հ. Ղ. Ալիշանը վախճանվեց նոյեմբերի 22-ին,
առաւօտեան, ինչպէս պատմում են յանկարծա-
կի Գիշերվայ մի փոքրիկ աղաբութիւնից յե-
տոյ, երբ առաւօտեան, իր սովորութեան հա-

ԲԵՐԼԻՆ: Հասժաճայն պաշտօնական բնա-
րին, պետական կանցլէրի ճառի մէջ, որով

նա պատասխանում էր Ռիխտերի յարձակումներին, կամ ինչով հերքում էր հացասատիների մաքրագների աւելացման եւ համայնարհային քաղաքականութեան մէջ եղած հալադրութիւնը։ Առողջ համայնարհային քաղաքականութեան հիմունքը,—ասաց նա,—կազմում է զօրեղ ազգային քաղաքականութիւնը։ Ինչ վերաբերում է առեւտրական դաշնագրերին, Գերմանիան այնպիսի դրութեան մէջ չէ գտնուում, որ ատիպման լինել կապել այդ դաշնագրերը ինչ պայմաններով էլ լինին։ Միւս պետութիւնները նոյնպէս չհաճաքողոված են դաշնագրերով, ինչպէս եւ Գերմանիան։ Օտարերկրեայ լրագրիւններ յարձակումները մաքրագների վրա ամենալաւ զովասանքն են նրանց համար։ Այն եղանակով, որով արտասահման մատուլի մի մասը զրկարարում է կառավարութիւնը, մի երեսոյթ է, որ բոլորովին զուրկ է օր եւ է արժանաւորութիւնից։ Կառավարութիւնը ցանկանում է ամենալաւ յարաբերութիւններ պահպանել բոլոր պետութիւնների հետ, բայց թող չի տայ իրան վախենալ ուրիշի պատշնայութեանը։

Բերլին: Բեյլառադուս շարունակում են վիճաբանութիւնները մաքսային հարցի մասին: Պատգամաւոր Գոտենյէմ (ազատամիտների միութիւնից) առարկում է օրինադէժի դէմ, ասելով, թէ բարձր մաքսագները կը թանգացնեն ժողովրդէն ուռելիքի պահարկերը: Պատգամաւոր Գոսպ (պետական կուսակցութիւնից) շէնորհակալութիւն է ցայտնում կանցչէրին նրա հոգաթութեան համար գիւղատնտեսութեան վերաբերմամբ եւ հաւատացնում է, թէ Ռուս լիառատեան հասարի պատահման առեւտորը լիապէս կարողմն ունի Գերմանիայից ինչ Գոսեղօսիկի չէտում է աւելի բարձր նովանաւորող մաքսագների ճնհրաժեշտութիւնը գիւղատնտեսութեան համար: Վիճաբանութիւնները կը շարունակվին եւ վարը:

ՎիէննԱ: Բիրլէտային մասնաժողովը երկարատեւ վիճաբանութիւններից յետոյ ընդունեց ժամանակաւոր քիւլտուր:

ԽճՀԱՆՈՒՄՆԵՐ՝ ԱՆԷՔՍԱՆԴՐՈՍ ԳԱՆԱՆԹԱՐ
ՀՐԱՊԵՐԱԿԻՉՆԵՐ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻԲ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ԲԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲՈՒԺԱՍԵՆԵԱԿ
ԴՕԿՏՐ Կ. ԱՐԾՐՈՒՆՈՒ
Նորադոյն ապարաններով եւ էրկարական մե-
քենաներով: Ժամանադարապէս
ԲԳԻ, ՔԹԻ, ԱԿԱՆՋԻ ԵՒ ԿՐԾՔԻ ՀԻՒԱՆ-
ԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Сергиевская ул., д. 12.

Չեմքերուդի բժշկական վարչութեան թու-
լակութեամբ: Մեծ արկղիկը 5 բուլբի, փաշ-
րը—3 բ. եւ 1 բ. 50 Կ.:



ՆՈՐ ՄԻՋՈՑ

ձաղըրը բաւականաւ եւ սարքանելու համար,
աչնչացնում է թեփը: Դուրս է եկել նաեւ
բաւարմին նոր միջոց

երեւոյն քնքշութիւնն եւ սպիտակութիւնն
տալու համար, տնէջտնեւմ է արեւի պատ-
ճառտոմ անուշիւթիւքը, մանեքը, տալիս է կո-
շտիւն քնքշութիւնն եւ սպիտակութիւնն: Այդ
գնեքը չափաւոր են. մեծ արտակող, արկիւ-
կի մէջ, 2 րուրի, փոքրը—1 ր. 50 կ.
Մարմնով են ըլլոր պարփիւներական եւ
գեղարմամանական խոտնիւթերում: Գլխա-
ւոր պահեաւոր գտնվում է Պետերբուրգում,
Պուլկինսկայա փողոց տ. № 15, ընկալա-
րան № 12. պահեստի ըստանմունքները
գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դե-
ղատան ասորանքների վաճառական ընկերու-
թեան խոտնիւթում: Սերաւանեան հրապարակ
եւ նրա ըստանմունքում, Միքայէլեան փո-
ղոց եւ Բաղդաււն. նաեւ Միքայէլեան կա-
մարջի վրա, Պապովի եւ Արեւորակ Վրի գե-
ղաւանդում: Օտարաքաղաքացիների պա-
տմաւերները կատարվում են անիլիզայե՛-
պտոմով:

2—100

Կերակրի, նախաբերի 25-ին,
ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒԹ
անդի է ունենալու

Տ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ
ԿՕՆՑԵՐՏԸ

Մասնակցութեամբ պ.պ. Ղուիսկահար * Ի-
վիօլնչիկիստ Դորօթիօսովի եւ պիանիստ Կէս-
նէրի:
Սկիզբը 8 1/2 ժամին
Տոմաշնէրը՝ սկսած 3 ր. 60 կօպէկից մին-
չեւ 60 կ. ծախվում են պ. Սուզանաճեանի
նազադինում, իսկ կօնցէթով օրը՝ ժողովարար
Ժուգ:

1—3

Գ. ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ
արհեստանում

ընութեան տեսարանները (պէղաժ) նկար
չութեան դասեր, կիրառի օրեր, առաւօ
տեան ժ. 10 մինչեւ 12:

1—3

ԲԱԳՈՒ
 Հ. Զ. - Ա. ԹԱԴԻԵՎԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ
 Հինդաթի, նոյեմբերի 29-ին,
 Հայ դերասանական դրամատիկ ընկերությունը
 Մասնակցութեամբ ա. Սիբուսոյ շի
 Սեքունի ԱՌԻՍՏՈՒԼ
 Կր ներկայացնէ :

ՀԱՐԵՆԱԿԱՆ ՏՈՒՆ
Դրանա 4 արար. հեղ. Ջուզեբմանի, Թարգմ.
Ս. Բառայեանի:
Մանակցում են՝ ա. Աւետեան, օր. Գուլա-
զեան, ա. Սիւրանոյ, Փառանձեմ, պ. պ. Ա-
բէկեան, Ալիսանեան, Զարիֆեան, Պետրոսեան
Ստեփանեան, Վարդ, Ռշտունի:
Սկզբը ժամը 8-ին:
Տեղերի գները առկորական են:
1—2

Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպրոցի հոգաբարձական խորհրդարանում այս նշոյմբեր 28, երեկոյեան ժամի 8-ին լինելու է անուրկապալով տառու Գ. տարի ժամանակով, 1-ի, յունիստի 1902 թ. Սաղմոսը քարաքիւ VII. ու. եղած, հանգուցեալ Օթոնեանի նուիրակուածքը (այժմս պանդակ), որից տառացիութեան տարեկան 1226 բուրլի Պայմաններ կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատանը աստեանայն օր, բացի տօներէց, ցերեկվայ ժամ 10-1:

3—3

Ո Մ Կ Ե Գ Ո Յ Ը ԵՒ Ա Ն ՈՒ Շ Ա Հ Ո Տ

ՄԵՂՐ

Ա. ՄԻԹԱՐԵԱՆԻՍ՝ ՄԵՂՈՒԱՆՈՑԻՑ

Ծախվում է Լեբանոնականության փողոցում, Տէր
Միքայելյանին № 3 տանը, Աբաս-Աբաղակյան
հրապարակի մոտ, սուտաբը զավթից⁽⁷⁾ շատ ձգա
նակ ձախակողմանի փունայարկը:

Մեզրի պտուղը—9 բուլբի, փունայան—25 կոպեկ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
 լայնում է պ. պ. անդամներին, կոնգրեսանե-
 րին եւ մշտական յաճախորդներին, որ 190
 թվ. ամսականները կը տրվեն միմյալին ժողո-
 վաբանի զբաղենեակովս նույնմբերի 21-ի
 մինչեւ գեկտեմբերի 15-ը:

2—8

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ

ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ ՎԱՅՄԱՆՎՈՒՄ ԵՆ

«Ռ. Պատկանեանի երկերը», երկու հատոր
ր.:

Այլ. Երեցեանի «Գովակաւ հայք եւ ամենայն
այոց կաթողիկոսութիւնը» երկու հատոր 4 ր.:

«Խոտարարական ձեռնարկ» խոհանոցը եւ իր
արգ ու սարգը, տ. Վ. Ռոտինեանի 1 ր.:

«Ժողովրդի ընթերցանութիւնը», Յ. Տէր-
իրաբեանի 25 կ.:

«Սուրբ գրոց հին-ուխտի պատմութեանց
նշարձակ աշխատարարը» լուսարանութեամբ
ու աշխարհի անցքերով, յարմարեցած ժո-
ղովրդի ընթերցանութեան համար Գ. ք. Ման-
սակունու 2 ր. 50 կ.:

«Ընթերցողների ուշադրութեանը», Մեռ. քա-
նայ Սեւեանի, 10 կ.:

«Արքեպիսկոպոս անանց ուսուցչի», Կարգալ սո-
րորնու համար 94 պատկերով, Յովհ. Տէր-
իրաբեանի 35 կ.:

«Առեւծածեւ Մհեր», ազգային պօէսա, Գ.
ալաաեանի, 25 կ.:

Պատի եւ ծոցի ուսեբէն եւ հայերէն զանա-
նաեակ օրացոյցներ:

«Образцы и формы» довѣренностей, вексе-
ей, договоровъ, духовныхъ завѣщаній, про-
шеній, заявленій, отзывовъ, частныхъ, апелля-
ціонныхъ и кассационныхъ жалобъ и т. д. 60 к.

«Русское правописаніе», Я. К. Г. 60 к.

«Դրսիկ» Тифлясь, Книжный магазинъ «Гут-
енбергъ», Г. Гадустьян, Лорисъ-Меликов-
ска, № 11.

1—3

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Հեռոն Կարապետեան

Դարձանում է առամներ, չինում է պլոմբներ,
ռսկէ պտակներ արձառներէ վրա նստացնելու
եւ կեղծ առամներ ռսկէ եւ կառուչուկէ պլաս-
տիկաների վրա:

Ընդունում է հիւնադներ, ժամը 9-ից առա-
ւօտան մինչև ժամը 7 երկկուրեան:

Սօրլուկակալ փողոցի վրա, տուն Միրզոե-
սի թիւ 8.

19—30

ՊՏՏԻՒ ՈՒՆԻՄ ԾԱԾՏԱՐԱՐԵԼՈՒ
Պ.Պ. ԱՅԳԵՏԷՐԵՐԻՆ,
որ արդէն տասացվել են Թիֆլիսում—Պոսոբկի
քարավանսարայում, Դանձակում—Պատրի Կո-
ղոց, պ. Նելչէ Դրիգորեանցի մօտ, Բաղում
—Պարապետ, «Գրանդ Օւէլի» դիմաց, ընտիր
պտղատու ծառեր՝ պտուկատուած ընտիր պտու-
կներիցցւ Մեն Քանակութեամբ պատուէր տու-
ողներ թող բարեհաճեն դիմել այս հասցեով
—Черезъ Забѣталы въ Белоканъ. Аваку
ԱՅԿԻՄՊ.

ԲԺԻՇԿ Ա. ՄԻԽԻԹԱՐԵԱՆՆՑ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄՈՒԹՈՒ ՀԻՒԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Առաւօտեան ժամը 12—2
Երեկոյեան ժամը 5—8
Սօյլակ, Բերդաւովսկայա փողոց, տ. Արարա-
տեսանի, № 41:
7—10

Յրանիական Եղեկաւային Ընկերութիւն
 «ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — «MESSAGERIES MARITIMES».

27-ին Նոյեմբերի (10-ին Դեկտեմբերի ըստ Ն. Ծ) .մեկնելու է Բաթումից, երեկոյան
Խամբ 5-ին, «Tigre» յոգենաւոր, հանդիպելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պօլիս, Դարդանէլ, Կա-
ալլա, Սալոնիկ, Սիրա, Պատրաս, Մարսէլլ, Հալք եւ Լոնդոն:
Ուղղակի հաղորդակցութեան տուժականներ մինչեւ Պարիզ, յոյնպէս եւ մինչեւ Շանգհայ
Ձինաստանում), Վլադիվոստոկ գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակա-
ցեցած գներով:
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին՝ հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել
Դնկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, նախկին Արծրունու գալէրէյում, №
27 գրասենեակը, տեղեֆոն № 608: Գրասենեակը բաց է 9—1 ժամը ցերեկվայ եւ 5—7-ը երե-
կոյանս:

1—1


Դաշնամուրի

Վարպետ


ԻԳՆԱՏԻ ԶՕՄԻՆԻԶ ՏԱՐԱՅԿՈՎՍԿԻ
 Դնդունում եմ կարկասելու եւ ստորգրելու զանազան տեսակի զանապուրներ եւ պիմաններ,
 կատարում եմ հիմնական վերաորոշողութիւն, որից ստացվում է առաջնակարգ ձայն: Աշխա-
 տանքը կատարում է հմտութեամբ եւ երաշխաւորութեամբ: Թիֆլիս, Միքայելեան փողոց,
 Իրանդուղի կողմին: 1—2

Ստացել ենք Մօսկվայի լայտնի առեւտրական տուն
Ա. Կ. Բ. ԲՕՂԷՆԳՎ՝ՅԻՑ

Մենք ԲԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՒ ԵՐԵՄԱՆԵՐԻ
ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ

Դնդոնում ենք նաև ամեն տեսակ ՊԱՏՈՒՆՆԵՐ, Դժուարացիների և Ռուսաստանի կառնե-
րից (waterijs) Դիմել

ԵՂԲ. Վ. և Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻՆ
Գօթականի պրոսպեկտի վրա, առաջին գիմնազիայի հանդէպ: 8—10

Բժիշկների եւ կրփնիստների բազմաթիւ փորձերը
ց ո յ ց ե ն ա ու ե լ, ո ը

„U O U U S O Z U V“

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՆՆԵՂԱՐԱՐ ԵՒ ԿԱԶՄՈՒՐԻ ԶՄԻՋՈՑՆԷ
 աստուծեան, թուրութեան, ջղային հիւանդութիւնների և առհասարակ բոլոր տե-
 ապառ անոց հիւանդութիւնների գէմ: ԵՍԽԿ ՈՒՄ Է ԲՈՒՐԸ ԴԵՂԱՏԵՒ:

Ի ԴԵՂԱԳՈՐԾԱԳՈՆ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ: Սօմառօղայի ներդրածութեան
 Թիւնը և բազմաթիւ բժշկիներ յայնսած կարծիքները նրա մասին, առաջին պա-
 Տանջոյ, ճրիարար ուղարկուի է

ՖՐԻԴ. ԲԱՅԷՐ եւ **ԸՆԿ.^օ**
ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ
(Москва, Старая площадь, дом Армянской Фабри. Бажора и К^о)

5, 15, 25 *սեպ.* 3, 13, 23, *հոկտ.* 2, 12, 22 *նոյ.* 4, 14, 24 *դեկ.*) 6—14